ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2008 թվականի դեկտեմբերի 26-ին

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 48. ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԸ, ԽՈՐՀՐԴԱԿԱՆՆԵՐԸ, ՕԳՆԱԿԱՆՆԵՐԸ, ՄԱՄՈՒԼԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

1. Քաղաքապետն ունի մեկ առաջին տեղակալ և կարող է ունենալ ևս ոչ ավելի, քան 5 տեղակալ:

2. Քաղաքապետի առաջին տեղակալը փոխարինում է քաղաքապետին վերջինիս բացակայության ժամանակ:

3. Քաղաքապետի տեղակալներին քաղաքապետի ներկայացմամբ նշանակում է ավագանին:

4. Քաղաքապետի առաջին տեղակալը պետք է լինի Երևանի ավագանու անդամ:

5. Քաղաքապետի տեղակալներին պաշտոնից ազատում է քաղաքապետը:

6. Քաղաքապետի տեղակալներն իրականացնում են քաղաքապետարանի կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորությունները:

6.1. Քաղաքապետի տեղակալն օրենքով նախատեսված դեպքերում որպես համայնքի (Երևանի) ներկայացուցիչ հանդես է գալիս դատարանում, ինչպես նաև իր իրավասության սահմաններում տալիս է դատարանում հանդես գալու լիազորագրեր:

~~6.2. Քաղաքապետի տեղակալը Երևան քաղաքի աշխարհազորային պայմանական զորամիավորման ղեկավարն (հրամանատարն) է: Քաղաքապետի տեղակալը Երևան քաղաքի աշխարհազորային պայմանական զորամիավորման ղեկավարումն իրականացնում է աշխարհազորի պատրաստության ու կիրառման պլանների համաձայն:~~

7. Քաղաքապետի հանձնարարությամբ քաղաքապետի տեղակալները կարող են իրականացնել նաև այլ լիազորություններ:

8. Քաղաքապետի տեղակալները չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

9. Քաղաքապետը կարող է ունենալ խորհրդականներ և օգնականներ, մամուլի քարտուղար:

10. Քաղաքապետի խորհրդականների և օգնականների թվաքանակը քաղաքապետի ներկայացմամբ սահմանում է ավագանին:

11. Քաղաքապետի խորհրդականներին, մամուլի քարտուղարին և օգնականներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքապետը:

(48-րդ հոդվածը փոփ. 25.03.2020 ՀՕ-192-Ն, 28.10.2020 ՀՕ-469-Ն, 03.11.2020 ՀՕ-485-Ն, 16.12.2021 ՀՕ-429-Ն օրենքներ)

ՀՈԴՎԱԾ 68. ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Երևան քաղաքում պաշտպանության կազմակերպման բնագավառում քաղաքապետն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) օրենքով սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև ըստ բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացնում է տարածքային զինվորական կոմիսարիատ.

2) օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպմանը.

3) իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր տեղեկատվություն է տրամադրում տարածքային զինվորական կոմիսարիատին:

2. (2-րդ մասն ուժը կորցրել է 04.10.17 ՀՕ-137-Ն օրենք)

~~3. Պաշտպանության կազմակերպման բնագավառում քաղաքապետն իրականացնում է հետևյալ պատվիրակված լիազորությունը.~~

~~1) ապահովում է Երևան քաղաքի վարչական շրջանների աշխարհազորային պայմանական բրիգադների համալրումն աշխարհազորայիններով՝ Երևան քաղաքում ըստ վարչական շրջանների հաշվառված քաղաքացիներից.~~

(68-րդ հոդվածը փոփ. 18.11.09 ՀՕ-217-Ն, 04.10.17 ՀՕ-137-Ն, 28.10.2020 ՀՕ-469-Ն օրենքներ)

ՀՈԴՎԱԾ 102. ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԸ (ՏԵՂԱԿԱԼՆԵՐԸ)

1. Վարչական շրջանի ղեկավարի տեղակալը (տեղակալները) իրականացնում է (են) վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությամբ իրեն (իրենց) վերապահված լիազորությունները:

2. Վարչական շրջանի ղեկավարի բացակայության ժամանակ վարչական շրջանի ղեկավարի հանձնարարությամբ տեղակալը (տեղակալներից մեկը) իրականացնում է վարչական շրջանի ղեկավարի լիազորությունները:

Վարչական շրջանի ղեկավարի կողմից ժամանակավոր պաշտոնակատար նշանակվելու անհնարինության դեպքում վարչական շրջանի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակում քաղաքապետը:

3. Վարչական շրջանի ղեկավարի տեղակալի (տեղակալների) պաշտոնը համայնքային վարչական պաշտոն է:

~~4. Վարչական շրջանի ղեկավարի տեղակալը վարչական շրջանի աշխարհագորային պայմանական բրիգադի ղեկավարն (հրամանատարն) է: Վարչական շրջանի ղեկավարի տեղակալի կողմից վարչական շրջանի աշխարհագորային պայմանական բրիգադի ղեկավարումն իրականացվում է աշխարհագորի պատրաստության ու կիրառման պլանների համաձայն:~~

(102-րդ հոդվածը փոփ. 06.12.12 ՀՕ-226-Ն, 04.10.17 ՀՕ-137-Ն, 21.01.2020 ՀՕ-25-Ն, 28.10.2020 ՀՕ-469-Ն օրենքներ)